ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ XIII ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԸ

1970 թ. օգոստոսի 16—23-ը Մոսկվայում կայացավ պատմական գիտությունների XIII միջազգային կոնգրեսը։ Պատմաբանների միջազգային կոնգրեսները հրավիրվում են 1900 թվականից սկսած, իսկ հետպատերազմյան տարիներից՝ սահմանված պարբերականությամբ՝ հինգ տարին մեկ։

Մոսկովյան կոնգրեսի աշխատանքին մասնակցում էր ավելի քան 4000 պատմաբան, աշխարհի մոտ 60 երկրներից։ Ի տարբերություն արտասահմանում անցկացվող կոնգրեսների, որոնց մասնակցում են սահմանափակ թվով սովետական գիտնականներ, Մոսկվայի կոնգրեսին մասնակցեցին մոտ 1400 սովետական պատվիրակներ, որոնք ներկայացնում էին մեր պատմական գիտության լավագույն ուժերը։ Սովետական պատվիրակության կազմում կոնգրեսի աշխատանքներին մասնակցեցին նաև Հայաստանի մի խումբ պատմաբաններ՝ թվով 25 գիտնական։

Մոսկովյան կոնգրեսն աչքի էր ընկնում իր անթերի կազմակերպվածությամբ։ Մի կողմից առանցնացվել էին առավել կարևոր, ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող պրոբլեմները, իսկ մյուս կողմից, գրեթե բոլոր պատվիրակները հնարավորություն ունեին միաժամանակ մասնակցել նաև իրենց հետաքրքրող հարցերի քննարկմանը։

Բանավեճերին ավելի շատ ժամանակ տրամադրելու և քննարկումների գիտական բարձր մակարդակն ապահովելու նպատակով պատմաբանների XIII կոնգրեսի աշխատանքներն սկսվելուց կես տարի առաջ զեկուցումների տեքստերը ներկայացվել էին կազմկոմիտեին։ Դրանից հետո ազգային կոմիտեների առաջարկած ներկայացուցիչներից ընտրված էքսպերտները, լինելով քննարկվող հարցերի առավել հեղինակավոր մասնագետներ և նախօրոք նախապատրաստվելով, անմիջապես բանավեճ էին ծավալում համապատասխան զեկուցման հանգուցային հարցերի շուրջ։ Շատ ժամանակ էր մնում նաև ցանկացողների ազատ բանավեճի համար։ Կոնգրեսի աշխատանքների ընթացքն արդարացրեց սովետական կազմկոմիտեի այդ հետաքրքիր նախաձեռնության օգտավետությունը։

Կոնգրեսի թեմատիկայի բաժանման համար հիմք էին ծառայել ժամանակագրական՝ հին, միջնադարյան, նոր և ժամանակակից պատմության չորս բաժինները։ Բացի այդ, ընտրվել էին երկու խոշոր թեմաներ, որոնք քննվեցին բաժիններից դուրս և առաջացրին բոլոր երկրների պատմաբանների մեծ հետաքրքրությունը։ Այդ թեմաներն էին՝ «Պատմությունը և սոցիալական գիտությունները» («Մեթոդոլոգիայի» ենթաբաժին) և «Նացիոնալիզմը և դասակարգային պայքարը Ասիայի ու Աֆրիկայի արդիականացման պրոցեսում» («Մայրցամաքների պատմության» ենթաբաժին)։

Կոնգրեսի աշխատանքի օրերին տեղի ունեցան նաև Պատմական գիտությունների միջազգային կոմիտեի ինը ներքին հանձնաժողովների (ռազմական համեմատական պատմություն, եկեղեցու համեմատական պատմություն, ժողովրդագրություն, ներկայացուցչական ու պառլամենտական հիմնարկությունների պատմություն, մամուլի պատմություն, քաղաքների պատմություն, համալսարանների պատմություն, մատենագիտություն և պատկերագրություն) և կոմիտեին հարող տասներեք կազմակերպությունների (Ծովային պատմության միջազգային հանձնաժողով, Անվանաբանության կոմիտե, Սլավոնական հետազոտությունների ասոցիացիա, Հռոմի հնագիտության, պատմության և արվեստի ինստիտուտների միություն, Իրավունքի պատմության և իրավական ինստիտուտների ասոցիացիա, Տնտեսական պատմության ասոցիացիա, Աշխարհագրության և պատմության պանամերիկյան ինստիտուտ, Սոցիալական շարժումների և սոցիալական կառուցվածքների պատմության միջազգային հանձնաժողով, Երկրորդ համաշխարհային պատերազմի պատմության միջազգային կոմիտե, Բյուզանդագիտական հետազոտությունների ասոցիացիա, Վերածննդի ուսումնասիրության ընկերությունների և ինստիտուտների ֆեդերացիա, Հարավ-Արևելյան Եվրոպայի ուսումնասիրության ասոցիացիա, Դրամագիտության միջազգային հանձնաժողով) նիստեր, որտեղ քննարկվեցին այդ ճյուղերի կարևոր պրոբլեմները, և որոնց ընթացքում ամրապնդվեցին տարբեր նեղ մասնագիտությունների ներկայացուցիչների գիտական կապերը։

Պատմաբանների XIII միջազգային կոնգրեսի բացման օրը, օգոստոսի 16-ին, Մոսկվայի Կրեմլի համագումարների պալատում «Լենինը և պատմությունը» զեկուցումով հանդես եկավ սովետական ակադեմիկոս Ե. Մ. Ժուկովը։

ՍՍՀՄ Մինիստրների սովետի նախագահ Ա. Ն.

Կոսիգինի կոնդրեսին հղած ողջույնը պատգամավորներն ընդունեցին ծափահարություններով. Պատմությունը,— ասված է ողջույնի մեջ,— կոչված է ուսումնասիրելու մարդկության անցած դժվարին և բաղմաբովանդակ ուղին, սերունդների հարուստ փորձը՝ սոցիալական առաջադիմության, հասարակության առավել կատարյալ կազմակերպման համար։ Պատմության կուտակած լայն դիտելիքները համաշխարհային մշակույթի կարևորագույն արժեքներն են։ Առանց պատմությանը դիմելու հնարավոր չէ ժամանակակից սոցիալական պրոցեսները ճշգրիտ հասկանալ։ Հետազոտելով և ընդհանրացնելով անցյալի փորձը, պատմությունը օգնում է ճանաչել և օգտագործել հասարակական զարգացման օրինաչափությունները՝ ամբողջ մարդկության բարօրության համար։

Կոնդրեսի աշխատանքում հատուկ տեղ գրավեց օգոստոսի 19-ին կայացած սիմպոզիումը՝ նվիրված Վ. Ի. Լենինին, որին մասնակցեց պատվիրակների զգալի մասը։ Քննարկման հիմքում դրված էր «Վ. Ի. Լենինը և պատմական դիտությունը» թեման։ Սիմպոզիումում ելույթ ունեցան պատմաբաններ Պ. Վոլոբուևը, Ի. Գալկինը (ՍՍՀՄ), Ֆ. Մուչին (Հունգարիա), Մ. Օժեխովսկին (Լեհաստան) և ուրիշներ նշեցին Լենինի գաղափարների արմատական նշանակությունն անցյալի ու արդիականության պատմական երևույթների ուսումնասիրության գործում, շեշտեցին, որ լենինյան գաղափարները նպաստում են միջազգային առաջադիմական շարժումների լայն զարգացմանը։

Կոնգրեսի «Մեթոդոլոգիա» ենթաբաժնի գծով «Պատմությունը և սոցիալական գիտությունները» մեծ թեմայի շուրջը քննարկվեց յոթ զեկուցում՝ «Պատմագիտական մեթոդի և հասարակական գիտությունների մեթոդի տարբերությունը» (Թ. Շիդեր, ԳՖՀ), «Սոցիալական գիտությունների մեթոդը պատմագիտական ուսումնասիրության մեջ» (Ռ. Պապադոպուլոս, Կիպրոս), «Պատմությունը, հասարակական գիտությունները և մաթեմատիկայի կիրառումը» (Ջ. Հեքստեր, ԱՄՆ), «Պատմությունը և հումանիտար գիտությունները» (Ա. Դյումուկ, Կանադա), «Պատմական իմացությունը հասարակական գիտակցություն է» (Լ. Էլեքեշ, Հունգարիա), «Լեզուն և պատմությունը» (Ա. Դյուպրոն, Ֆրանսիա) և «Իրադարձությունների պատմությունը և կառուցվածքների պատմությունը» (Ե. Սեստան, Իտալիա)։

Զեկուցումների դրույթների շուրջը ծավալվեց աշխույժ բանավեճ. ոմանք բոլորովին ժխտում էին պատմականության սկզբունքը, ցանկանալով երևույթները դիտել պատմական կապից և օրինաչափություններից դուրս, իսկ ոմանք կողմնակից էին անչատել պատմագիտությունը մյուս հասարակական գիտություններից որպես ատուկ դիտություն անցյալի մասին։ Մասնակիցների մեծ ուշադրությանն արժանացավ թեմայի էքսպերտ, սովետական ակադեմիկոս Ն. Մ. Ժուկովի ելույթը։ Նա պաշտպանեց պատմականության սկզբունքը հասարակական և սոցիալական երևույթների վերլուծության մեջ, հանդես եկավ պատմությունը մյուս հասարակական գիտություններին հակադրելու փորձերի դեմ, քանի որ բոլոր հասարակական գիտությունները, այդ թվում և պատմությունը, ունեն ուսումնասիրության նույն օբյեկտը՝ հասարակությունը։

«Մեթոդոլոգիա» ենթաբաժնի երկրորդ խոշոր թեման էր «Թվերը որպես պատմաբանի ինֆորմացիայի տարրեր»։ Ինչպես հայտնի է վերջին տարիներին հասարակական գիտություններն ավելի ու ավելի հաճախ են դիմում վերլուծության այնպիսի միջոցների, ինչպիսին են քանակական մեթոդը, հաշվիչ մեքենաները, սոցիոլոգիական հարցումները։ Կոնգրեսում բարձրացավ այն հարցը, թե որքանով են այդ մեթոդներն ընդունելի պատմական գիտությունների համար։ Սովետական մի խումբ հեղինակներ՝ պրոֆ. Ի. Կովալչենկոյի գլխավորությամբ զեկուցում էին ներկայացրել մաթեմատիկական մեթոդները և հաշվիչ տեխնիկան սոցիալ-տնտեսական, պատմա-դեմոգրաֆիկ և հնագիտական ուսումնասիրությունների մի ամբողջ շարք հարցերի լուծման համար օգտագործելու մասին։ Պրոֆ. Ժ. Շնեյդերը (Ֆրանսիա) պատմեց, թե ինչպես են էլեկտրոնային հաշվիչ մեքենաների օգնությամբ ուսումնասիրվել Ֆլորենցիայի 1427 թ. համընդհանուր մարդահամարի և ունեցվածքի հաշվառման տվյալները։ Այդ զեկուցումների քննարկումը բուռն բանավեճ առաջացրեց քանակային անալիզի թույլատրելի սահմանների շուրջը, քանի որ պատմագիտական ուսումնասիրություններում ամեն ինչ չէ, որ կարելի է քանակական գնահատության ենթարկել։

Ենթաբաժնի մյուս թեման, որ գրավեց կոնգրեսի մասնակիցների ուշադրությունը, «Կենսագրության գերն ու տեղը պատմագիտության մեջ» հարցն էր։ Ավստրիական մի խումբ գիտնականների «Կենսագրությունը և պատմական գիտությունը», կանադական գիտնական Ա. Վիլսոնի «Կենսագրությունը որպես պատմական հետազոտություն», արևմտա-գերմանական պատմաբան Վ. Խուբաչի «Կենսագրությունն ու ինքնակենսագրությունը» և հոլանդական գիտնական Լ. գե. Յոնգի «Պատմաբանն ու հարցազրույցը» զեկուցումների շուրջը աշխույժ բանավեճ ծավալվեց։ Մատնանշվեց, որ պատմական խոշոր իրադարձությունները նախ և առաջ գարա-

շրջանի սեփականությունն են և ոչ թե լոկ վերաբերում են այս կամ այն գործչի գործունեությանը և որ անհրաժեշտ է որոշակիորեն սահմանազատել այն անձնավորությունների շրջանակը, որոնց կենսագրությունն արժանի է գրելու ՍՍՀՄ և սոցիալիստական երկրների գիտնականների ելույթներում մասնավորապես նըշվեց հեղափոխական գործիչների կենսագրությունների կարևոր գերը պատմական ժամանակաշրջաններն ու իրադարձությունները հագեցված ու ճշգրիտ վերարտադրելու համար։

Խոշոր թեմաներ էին դրվել «Մայրցամաքների պատմությունը» ենթաբաժնի գծով։ Նիստի առաջին օրը նվիրված էր «Նացիոնալիզմը և դասակարգային պայքարը Ասիայի ու Աֆրիկայի արդիականացման պրոցեսում» թեմային։ Առավել մեծ հետաքրքրություն առաջացրին Ա. Պալատի (Չեխոսլովակիա) «Որակական փոփոխություններ ասիական երկրների զարգացման ասպարեզում՝ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո» և Վ. Մարկովի (ԳԴՀ) «Պետությունների առաջացման ուղիներն ու ձևերը Ասիայում և Աֆրիկայում՝ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո» զեկուցումները։ Զեկուցողների և ելույթ ունեցողների կարծիքը համընկավ այն հարցում, որ անդառնալիորեն անցյալի գիրկն են անցել այն ժամանակները, երբ աշխարհը խստորեն բաժանված էր կառավարող «սպիտակների» և նրանց ենթակա «գունավորների» միջև։ Այժմ Ասիայի և Աֆրիկայի պետությունները հանգես են գալիս որպես իմպերիալիստական աշխարհակարգի հաղթահարման համաշխարհային պրոցեսի անբաժանելի բաղկացուցիչ մասեր։ Դրա համար էլ, թեև շատ բան ճշգրտման ու մանրամասների կարիք ունեն, այդ պետությունները մեր ժամանակաշրջանի այն ուժերից են, որոնք վճռում են ապագայի բախտը։

«Մայրցամաքների պատմությունը» ենթաբաժնի մյուս խոշոր թեմաներն էին «Լատինական Ամերիկայի տեղը XIX և XX դդ. համաշխարհային պատմական պրոցեսում» և «Սահմանամերձ հողերի դերը մայրցամաքների պատմության մեջ»։ Վերջին թեմայի կապակցությամբ մեծ բանավեճ ծավալվեց կանադական գիտնական Ռ. Կուկի «Սահմանները և մետրոպոլիան. Կանադայի փորձը» զեկուցման շուրջը։ Մտքերի փոխանակությանը մասնակցած սովետական գիտնականներ Գ. Դախշլեյգերը, Վ. Տիշկովը, Ա. Պրեոբրաժենսկին, Ն. Ապոլովան, Ե. Դրուժինինան և ուրիշները ցույց տվեցին ռուսական գաղութացման սկզբունքային տարբերությունը ամերիկյան գաղութացումից, քանի որ Ռուսաստանն ունեցել է աշխարհագրական միասնություն և նախնական երկարատև շփումներ Սիբիրի, Ղազախստանի, Միջին Ասիայի, Անդրկովկասի ժողովուրդների հետ, իսկ այդ շրջանները Ռուսաստանին միացնելու ընթացքում տեղի է ունեցել ռուս և տեղական բնակչության մերձեցում, ընդ որում, վերջինը Ռուսաստանին միանալով հաճախ փրկվում էր ֆիզիկական ոչնչացման վտանգից։

Հետաքրքիր անցան ժամանակակից պատմության բաժնի աշխատանքները, ուր քննարկման էր դրված երկու զեկուցում. «Գաղափարական հոսանքները Հարավ-Արևելյան Եվրոպայում XIX—XX դդ., մինչև առաջին համաշխարհային պատերազմը» (Խ. Խրիստով, Բուլղարիա) և «Եվրոպական տերություններն ու Բալկանները XX դ. սկզբին (1900—1914 թթ.)» (Դ. Ջոգրաֆսկի, Հարավսլավիա)։

Հիշյալ զեկուցումներում և դրանց շուրջ ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին 30-ից ավելի պատմաբաններ, առաջ քաշվեցին մի շարք կարևոր, հանգուցային հարցեր, որոնցից կարևորներն էին հատկապես հետևյալ երեք հարցը.

1. Սոցիալական և ազգային-ազատագրական շարժումների հատուկ բնութագրման խնդիրը։

Պրոֆեսոր Խ. Խրիստովն իր զեկուցման մեջ, ելնելով այն փաստից, որ Հարավ-Արևելյան Եվրոպայի ժողովուրդներն իրենց ազգային-ազատագրական ու հակաֆեոդալական պայքարում ունեին ընդհանուր թշնամիներ՝ հաբսբուրգների կայսրությունը և օսմանյան բռնապետությունը, փորձ էր արել գծելու այդ պայքարի ընդհանուր պատկերը՝ բալկանյան բոլոր երկրների համար առաջարկելով մի ընդհանուր պարբերացում, այն է. առաջին ժամանակաշրջան՝ XIX դ. սկզբից մինչև 70-ական թվականները, երկրորդ ժամանակաշրջան՝ 70-ական թվականների վերջից մինչև առաջին համաշխարհային պատերազմը և Հոկտեմբերյան հեղափոխությունը, ըստ որում, սրանցից յուրաքանչյուրը նրա կարծիքով, կարելի է բաժանել հետևյալ երկու ենթաժամանակաշրջանների. ա) XIX դ. սկզբից մինչև 1848 թ. բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունն ու Ղրիմի պատերազմը և հետո՝ Ղրիմի պատերազմից մինչև 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմը, և բ) 70-ական թվականների վերջից մինչև XIX դ. վերջը և այնուհետև XX դ. սկզբից մինչև առաջին համաշխարհային պատերազմը և Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը։ Առաջին ժամանակաշրջանում ձևավորվում է ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսությունը և ծավալվում է հակաֆեոդալական ու ազգային-ազատագրական պայքարը, իսկ երկրորդ ժամանակաշրջանը բնորոշվում է բուրժուազիայի տիրապետության հաստատմամբ և հեղափոխական բանվորական շարժման սկզբնավորմամբ։ Հակաֆեոդալական,

ազգային-ազատագրական գաղափարախոսություններ ձևավորվել ու զարգացել է ամենից առաջ ֆրանսիական մեծ հեղափոխության, ինչպես նաև 1848 թ. հեղափոխական շարժումների ու Փարիզի կոմունայի ազդեցության տակ, իսկ 60—70-ական թվականների հեղափոխական դեմոկրատիզմը ռուս հեղափոխական դեմոկրատների ու սոցիալիստ-ուտոպիստների գաղափարների ազդեցությամբ։ 80-ական թվականներից արդեն, ըստ պրոֆ. Խրիստովի, գիտական սոցիալիզմի գաղափարներն են ներթափանցում և արագ տարածվում Բալկաններում։

Գնահատելով պրոֆ. Խրիստովի կատարած հսկայական աշխատանքը բալկանյան մի շարք երկրների նոր պատմության հանգուցային հարցերի լուսաբանման գործում, ելույթ ունեցողներից շատերը մատնանշեցին, միաժամանակ, որ դժվար է տալ ազգային-ազատագրական շարժումների զարգացման մի ընդհանուր պարբերացում՝ բոլոր երկրների համար, քանի որ, ընդհանուր մի շարք գծերի հետ մեկտեղ, դոյություն ունեին բազմաթիվ առանձնահատկություններ այդ երկրների ու նրանց ժողովուրդների պատմական զարգացման մեջ։ Նշվեց նաև, որ անհրաժեշտ է առավել հստակ ու որոշակի բնութագրել հեղափոխական-դեմոկրատական շարժման էությունը Բալկաններում և բացատրել, որ սոցիալական ազատագրության հարցը, ըստ էության, մինչև XIX դ. վերջը երկրորդ պլանի վրա էր, որովհետև բալկանյան ժողովուրդներն առաջին հերթին ձգտում էին թոթափել օսմանյան դարավոր լուծը և հասնել ազգային անկախության։

2. Հարավ-Արևելյան Եվրոպայի ժողովուրդների ազատագրության հարցում Արևմտյան տերությունների ու Ռուսաստանի դերի բնորոշման խնդիրը։

Այս հարցին անդրադարձան ինչպես պրոֆ. Խրիստովի, այնպես էլ պրոֆ. Դ. Զոգրաֆսկու զեկուցումը քննարկելիս։ Հարավսլավական և լեհ որոշ պատմաբաններ (Զորչևիչ, Պետրովիչ, Սկորրոնեկ և ուրիշներ) այն կարծիքը հայտնեցին, որ պրոֆ. Խրիստովը մի փոքր թերագնահատել է Արևմուտքի, մասնավորապես, Ֆրանսիայի դերը բալկանյան ժողովուրդների ազատագրման գործում և, ընդհակառակը, գերագնահատել ցարական Ռուսաստանի դերը, որն իսկապես նշանակալից է եղել, սակայն ազատագրված բալկանյան երկրները ցարիզմի դաժան քաղաքականության հետևանքով շրջվում էին նաև դեպի Արևմուտք, ձգտում էին ամրապնդել իրենց կապերը արևմտյան տերությունների հետ։

3. Օսմանյան կայսրության բոլոր ճնշված ժողովուրդների անկախության համար մղած դարավոր պայքարի համատեղ ուսումնասիրման խնդիրը։

Այս հարցին իրենց ելույթներում անդրադարձան բուլղարական ու հարավսլավական մի շարք պատմաբաններ, մատնանշելով, որ երեք դարից ավելի սուլթանական դաժան լծի տակ հեծող 11 ժողովուրդների պատմական բախտն անհրաժեշտ է հետազոտել համակողմանի՝ պատմաբանների միասնական, համագործակցված ջանքերով։

Այս հարցին առավել հանգամանորեն անդրադարձավ իր ելույթում սովետական պատմաբան, ակադեմիկոս Ծ. Պ. Աղայանը, որը մատնանշեց, որ բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարը միշտ էլ արձագանք է գտել հայ ժողովրդի, ինչպես նաև արաբների ազգային-ազատագրական շարժումների մեջ, ուստի ճիշտ չի վարվել պրոֆ. Զոգրաֆսկին՝ բալկանյան ժողովուրդների մղած պայքարը մեկուսացնելով Օսմանյան կայսրության բոլոր կեղեքված ժողովուրդների ազատագրական շարժումներից, և հատկապես հայ ժողովրդի դարավոր պայքարից։ Մինչդեռ նշված պրոբլեմի հետազոտությունը ցույց է տալիս, որ ճնշված բոլոր ժողովուրդների պայքարը կազմել է մի միասնական շղթա ընդհանուր թշնամու դեմ մղված դարավոր պայքարում։ Նա մի շարք փաստեր բերեց բալկանյան ժողովուրդների պայքարին հայերի մասնակցության վերաբերյալ և հատկապես նշեց 1912 թ. Բալկանյան առաջին պատերազմի ժամանակ հայկական չոկատների մասնակցությունը Անդրանիկի գլխավորությամբ՝ բուլղարական բանակի կազմում։ Այդ չոկատի հերոսական պայքարը բարձր գնահատականի արժանացավ բուլղարական կառավարության կողմից։ Այնուհետև, Ծ. Պ. Աղայանը կանգ առնելով հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հարցերի վրա, մատնանշեց, որ թեև ճնշված ժողովուրդների ճակատագրերը շատ ընդհանրություններ ունեն, սակայն պատմական պայմաններն այն ժամանակ թույլ չէին տալիս ստեղծելու մի միասնական ճակատ՝ ընդհանուր թշնամու դեմ։ Այդպիսի միասնական ճակատի բացակայության պատճառով էր, որ երիտթուրքական կառավարողները հնարավորություն ստացան, օգտագործելով պատերազմական իրավիճակը և իմպերիալիստական մեծ տերությունների փարիսեցիական ու խարդախ դիրքորոշումը հայկական հարցում, իրականացնել վաղօրոք մշակված ցեղասպան քաղաքականությունը հայ ժողովրդի պատմական հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում։ Պրոֆ. Դ. Զոգրաֆսկին իր պատասխան խոսքում գոհունակությամբ ընդունեց այդ դիտողությունը և նշեց հայ ժողովրդի դերը ճնշված ժողովուրդների՝ օսմանյան լծի դեմ մղած

պայքարում։ Քննարկվող պրոբլեմի համակողմանի ուսումնասիրության անհրաժեշտությունն ընդգծվեց ոչ միայն վերոհիշյալ բաժնում, այլև կոնգրեսի ժամանակ կայացած Հարավ-Արևելյան Եվրոպայի հետազոտությունների միջազգային ասոցիացիայի հերթական նիստում։ Այդ մասին իրենց ելույթներում խոսեցին Լեհաստանի, Ֆրանսիայի, Բուլղարիայի, Հունաստանի ներկայացուցիչները։ Մասնավորապես, նշվեց, որ հատուկ ուսումնասիրության առարկա կարող են դառնալ հետևյալ երկու թեմաները. «Բալկանյան երկրների քաղաքական միավորման միջոցները ազատագրական պայքարում XVIII—XX դդ.» և «Եվրոպական գործիչների մասնակցությունը ազգային-ազատագրական շարժումներին Բալկաններում XIX դ.»։

Նոր պատմության բաժնի նիստերը հիմնականում նվիրված էին Եվրոպայի XVI—XVII դդ. պատմության ինդիրներին։

Սովետական, մասնավորապես նաև հայ պատմաբանների համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում այն խնդիրները, որոնք քննարկվեցին միջնադարի բաժնում։ Հարկ է նշել հատկապես Ն. Ֆիլիպովիչի (Հարավսլավիա)՝ «Բալկանների և Միջերկրածովյան երկրների տնտեսությունը XV—XVI դդ.», Զ. Ուզալցովայի և Ե. Գուտնովայի (ՍՍՀՄ)՝ «Եվրոպայի երկրներում ֆեոդալիզմի ծագման պրոբլեմները», Գ. Շեկելի (Հունգարիա)՝ «Ֆեոդալական հասարակարգի զարգացման պատմական ուղիները և միջնադարյան հասարակության տարբերակները», Ֆ. Դվորնիկի (ԱՄՆ)՝ «Հունական և արևմտյան եկեղեցիների դերը Արևելքում միջին դարերում», Շ. Վերլինդենի (Բելգիա)՝ «Առևտուրը Սև ծովի վրա սկսած բյուզանդական ժամանակներից մինչև Թուրքիայի կողմից Եգիպտոսի գրավումը», Պ. Մոնտավնստի (Իսպանիա)՝ «Մահմեդականությունը և քրիստոնեությունը Միջերկրածովյան երկրների էկոնոմիկայում վաղ միջնադարի ժամանակաշրջանում» զեկուցումները և այլն։

Օդոստոսի 20-ին միջնադարի բաժնի նիստում, ամերիկյան գիտնական Ֆ. Դվորնիկի «Հունական և արևմտյան եկեղեցիների դերը Արևելքում միջին դարերում» զեկուցման քննարկման ժամանակ ելույթ ունեցավ ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Բ. Ն. Առաքելյանը։ Նա ընդգծեց որ, խոսելով քրիստոնեության տարածման և միսիոներների հաջողության կամ անհաջողությունների մասին, առաջին հերթին պետք է բացահայտել դրանց սոցիալ-տնտեսական և քաղաքական պատճառները։ Այդ տեսակետից Հայաստանի օրինակը բնորոշ է։ Մյուս բոլոր երկրներից Հայաստանն առաջինը քրիստոնեությունն ընդունեց որպես պետական կրոն (301—303 թթ.), քանի որ ֆեոդալական հարաբերությունների ծնունդն այդ ակտի սոցիալ-տնտեսական հիմքը հանդիսացավ։ Մյուս կողմից, քրիստոնեության ընդունմամբ Հայաստանը գաղափարապես տարանջատվեց Սասանյան Իրանից, որը խոշոր քաղաքական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի հետագա պատմության համար։ Արևելքում քրիստոնեության հետագա տարածման անհաջողությունը բացատրվում է այնտեղ ստեղծված իրադրությամբ, ինչպես և բյուզանդական կայսրության քայքայման ազդեցությամբ. այսինքն, դարձյալ եկեղեցու պատմության հիմքում ընկած էին ամենից առաջ քաղաքական և տոցիալական պատճառներ։

Հին պատմության բաժնում քննարկվեց 13 զեկուցում, որոնցից որպես կենտրոնական առանձնացված էր իտալացի պատմաբան Պիերո Տրեվեսի զեկուցումը՝ «Քաղաքական հավասարակշռության պրոբլեմը դասական անտիկ շրջանում»։ Զեկուցման մեջ դիտարկված էին Աքեմենյան Պարսկաստանի և Հունաստանի, Աթենքի և Սպարտայի, հելլենիստական երկրների, Հռոմի և Պարթևստանի, Հռոմի և գերմանական ցեղերի և այլ հակամարտ քաղաքական ուժերի փոխհարաբերությունը։ Հեղինակի արած կարևոր ու հետաքրքրական դիտողությունների հետ մեկտեղ ակնհայտ էր զեկուցման այժմեական ուղղվածությունը։

Մյուս զեկուցումներից հետաքրքրություն առաջացրին ֆիննական գիտնական Մակկոնենի զեկուցումը՝ ծառերի մասին մեր նախնիների ունեցած գիտելիքների վերաբերյալ և անգլիացի գիտնական Բրոուքտոնի՝ «Բախումը և շարունակականությունը հին Մերձավոր Արևելքում» զեկուցումը, որտեղ հեղինակը ձգտում էր տեսականորեն իմաստավորել, մի կողմից, պայքարի ու բախման, մյուս կողմից՝ խաղաղ հաջորդակցական զարգացման նշանակությունը մարդկության պատմության մեջ։

Սովետական պատմաբանների ներկայացրած երկու զեկուցումներից մեծ ուշադրության արժանացավ Ս. Ուտչենկոյի և Ի. Դյակոնովի համատեղ կազմած զեկուցումը «Հին հասարակությունների սոցիալական ստրատիֆիկացիան» թեմայով։ Այստեղ հետաքրքրական փորձ էր արված սոցիալական կառուցվածքի առումով դտնել այն ընդհանուրը, որ միավորում է հին Արևելքը և հունա-հռոմեական իրականությունը։ Եզրակացությունն այն էր, որ ըստ երևույթին երկու բևեռացած դասակարդերի փոխարեն (ստրուկ-ստրկատերեր), հին աշխարհում եղել է երեք դասակարդ. ա) արտադրամիջոցների տեր և չաշխատող (բուն շահագործող դասակարդեր), բ) արտադրամիջոցների տեր և աշխատող (հիմնականում՝ ազատ գյուղացիու-

թյուն), գ) արտադրամիջոցներից զուրկ և աշխատող (ստրուկներ և նրանց հարող շերտեր)։ Ելույթ ունեցողները մի շարք լրացումներ ու դիտողություններ արեցին զեկուցման թեզերի վերաբերյալ։

Մեծ հետաքրքրություն առաջացրեց նաև Ճապոնացի պատմաբան Մասաո Մորիի զեկուցումը «Մոնղոլիայի քոչվորների հին պետության քաղաքական կառուցվածքը» թեմայով։

Նշանակալի տեղ էին գրավում Պատմական գիտությունների միջազգային կոմիտեի ներքին հանձնաժողովների և կոմիտեին հարող կազմակերպությունների նիստերը։ Հատկապես հետաքրքիր անցան Սլավոնական հետազոտությունների միջազգային ասոցիացիայի (քննեց՝ «Քաղաքը և նրա դերը ազգային գիտակցության զարգացման գործում» թեման), Տնտեսական պատմության միջազգային ասոցիացիայի (քննեց՝ «Սեփականության ձևերը ֆեոդալական հասարակությունում և կապիտալիզմի առաջացումը» թեման), Բյուզանդագիտական հետազոտությունների միջազգային ասոցիացիայի (որն իր նիստերը նվիրեց «Բյուզանդիան և Ռուսաստանը XI—XV դդ.» պրոբլեմին) աշխատանքները։

Առավել խոշոր էին Սոցիալական շարժումների և սոցիալական կառուցվածքների պատմության միջազգային հանձնաժողովի և Երկրորդ համաշխարհային պատերազմի պատմության միջազգային կոմիտեի քննարկած պրոբլեմները։ Հանձնաժողովը քննարկման էր ներկայացրել «Գյուղացիական շարժումների ուսումնասիրությունը ժամանակակից աշխարհում (XVIII դ. վերջից մինչև մեր օրերը)» թեմայով ֆրանսիական գիտնականների համատեղ զեկուցումը։ Կոմիտեն իր նիստում քննեց սովետական, գերմանական ու անգլիական պատմաբանների մի քանի զեկուցումներ, որոնք միավորված էին «Աշխատավորական զանգվածները երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում» թեմայի տակ։ Ներկաների վրա մեծ տպավորություն գործեց սովետական նշանավոր զորահրամանատար, Սովետական Միության մարշալ Ի. Ս. Կոնևի ելույթը։ Նա նշեց, որ մարդկության ճակատագիրը ռազմական պատմաբաններից պահանջում է ամբողջ խորությամբ բացահայտել պատերազմի ակունքները, պատմական գրականության մեջ տալ դեպքերի ճշմարիտ արտացոլումը, կատարել խորը եզրակացություններ, սերունդներին ասել ճշմարտությունը նրանց մասին, ովքեր կանգնել են մահվան դիմաց՝ պաշտպանելով ազատասեր մարդկության շահերը։

Կոնգրեսում կարդացված զեկուցումների գերակշռող մեծամասնությունը բարձրացնում էին արդի պատմագիտության առջև այսօր ծառացած կարևոր պրոբլեմները։ Բոլոր զեկուցումների շուրջ աշխույժ ու բովանդակալից բանավեճ էր ծավալվում։ Քննարկումներին ընդհանուր առմամբ մասնակցեց ավելի քան 600 մարդ։ Այդ ֆոնի վրա հատկապես անախորժ տպավորություն էին թողնում կապիտալիստական երկրների պատմաբանների առանձին ելույթներ, որոնք ոչ այնքան գիտական, որքան քաղաքական բանավեճ բորբոքելու նպատակ էին հետապնդում։ Դրանց թվին պետք է դասել, օրինակ, ամերիկյան պատվիրակ Ռ. Փայփսի «Ռուսական պահպանողականությունը XIX դ. երկրորդ կեսին» զեկուցումը, որը կառուցված էր սուբյեկտիվ կոնցեպցիաների վրա և հավակնում էր էժան սենսացիա առաջացնել։

Օգոստոսի 23-ին, կոնգրեսի եզրափակիչ պլենար նիստում լսվեց ՍՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ Վ. Լազարևի «Միջնադարյան Ռուսիայի արվեստը և Արևմուտքը (XI—XV դդ.)» զեկուցումը։

Մեծ հետաքրքրություն առաջ բերեց կոնգրեսի օրերին գործող պատմական գրականության ցուցահանդեսը, որին վերջին տասը տարիներին լույս տեսած իրենց հրատարակություններն էին ներկայացրել շուրջ 30 երկրների պատվիրակություններ։ Սովետական պատմագիտական գրականության շարքում առաջին անգամ լայնորեն ցուցադրված էր Սովետական Միության բազմազգ ժողովուրդներով լույս տեսած գրքերը։ Դրանց պատմաբանները ծանոթանում էին մեծ հետաքրքրությամբ։

Կայացավ նաև Պատմական գիտությունների միջազգային կոմիտեի ասամբլեայի նիստը, որտեղ հետագա հնգամյա ժամկետի համար ՊԳՄԿ-ի պրեզիդենտ ընտրվեց սովետական ականավոր պատմաբան, ակադեմիկոս Ա. Ա. Գուբերը։

Պատմական գիտությունների XIII միջազգային կոնգրեսը նպաստեց տարբեր երկրների գիտնականների համագործակցության ընդլայնմանը՝ նրանց առջև դնելով պատմական գիտությունների հետագա զարգացման հրատապ խնդիրը՝ հանուն խաղաղության և մարդկության սոցիալական առաջադիմության։